

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորրը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

639.2
F-99

1932

24 SEP 1932

639.3
F-99

Ն. ՅԱ. ԲՐԵՆՑԵՎ

ՊԱՀՊԱՆԻՐ ԶԿՆՈՐՍԱԿԱՆ
ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

ՊԵՏՐՈՎ

1932

ՅԵՐԵՎԱՆ


06.03.2013

639.2
45
R-99

Ն. ՅԱ. ԲՐԵՆՑԵՎ

ՊԱՀՊԱՆԻ ԶԿՆՈՐՍԱԿԱՆ
ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

100/
30094



ՊԵՏՐԱՑ

ՃՐԵՎԱՆ

ՊԱՀՊԱՆԻՐ ԶԿՆՈՐՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Ընկեր կոլտնտեսական ձկնորս, մեր յերկրում կատարվում և մեծագույն սոցիալիստական շինարարություն:

Յերկրը՝ հետամնաց, աղքատ, անդրազետ գրությունից, դառնում է տեխնիկապես և տնտեսապես առաջալոր, կուլտուրական, հարուստ յերկրը: Բանվորներն ու կոլտնտեսականները սոցմբցակցությամբ և հարգածայնությամբ փոխում են իրենց վերաբերմունքը դեպի աշխատանքը: Ընկճող, ակամա աշխատանքը դառնում և պատ և գիտակցական: Միայն սոցիալիստական աշխատանքում կարելի յերեւան բերել կորով և հերոսություն, յերեւան հանել իր ունակություններն ու խելքը, իր ուշիմությունը: Ուժ ամենից չատ և ամենից լավ և աշխատում հաղթարել բնությանը, ով անձնական ունակությունները, մտավոր կարուությունը հանդես բերելով ցույց ե տալիս, թե ինչպես ամենալավ, ամենահեշտ կերպով կարելի յերադրել բնությանը, նա դառնում է իսկական հեղափոխական մարտիկ՝ հանուն նոր տեխնիկայի, տնտեսության, հանուն նոր կուլտուրայի, հանուն նոր կենցաղի:

Մեր ձկնային տնտեսությունն ել նմանապես աճում է: Պրոլետարիատն ու կոլտնտեսականները ձգուում են հետամնաց, նախնական ձկնային «արհեստագործությունից» ստեղծել բարձր կուլտուրական ձկնային տնտեսություն: Պրոլետարին ու կոլտնտեսականը կատարում են իրենց առաջ գրված խնդիրը՝ «Սոցիալիստական քաղաքների պրոլետարիատին սնել բարձրորակ, լավ վերամշակված և թարմ ձկնով»:

Լինինյան կուսակցության և կառավարության այդ առաջադրությունը կատարելու համար պետք է սոցիալիստական ձեռով վերակառուցել ձկնային տնտեսությունը: Դրա համար պետք է աշխատել նոր ձեռով, կուլտուրական ձեռով:

Վերցնենք թեկուց այսպիսի մի փոքրիկ հարց, ինչպիսին և ձկնորսական գործիքների խնամքը: Մենք չենք կարողանում կուլտուրական կերպով խնամել նրանց: Սակայն մեզ մտած տարի ձկնորսական գործիքների մաշվածը համում է մոտ 25 միլ. ոուրլու, իսկ հետագայում դրանից ավել կլինի: Մոտավորապես հնգամյակի վերջում այդ թիվը 30 միլ. ոուրլուց կանցնի:

Յենթագրենք, վոր մենք սովորել ենք մի քիչ ավելի լավ վերաբերվել գորսորդական գործիքներին, ուշադիր կերպով խնամել ուռկանները և այդ համապարհով նրանց մաշվածը իջեցրել ենք մեկ տոկոսով: Դրանով իսկ մեր տնտեսության համար յուրաքանչյուր մոտակա տարում խնայած կլինիյինք մոտավորապես 250-300 հազար ոուրլի:

Ահա, թե ինչ և նշանակում իջեցնել ուռկանների մաշվածքը միայն մի տոկոսով: Մենք, սակայն, միայն մեկ տոկոսի և միայն տոկոսներն իջեցնելու համար չե, վոր պետք է պայքարենք:

Յուրաքանչյուր կոլտնտեսական-ձկնորս, յուրաքանչյուր բանվոր՝ պետք ե գիտակցեն, վոր մինչեւ այժմ ձկնորսական գործիքներն ամենութեք չե, վոր կարողանում ենք ճիշտ ողտագործել: Որինակ՝ չափազանց վաս, թերի աշխատանքային բեռնվածություն ենք տալիս ուռկաններին: Հաճախ ուռկանները կույտերով թողնում են բաց գրությամբ միայն այն պատճառով, վոր ձուկ քիչ են վորսում, իսկ կուտնեսականներն սպասում են, թե յերբ ձուկը կշատանա: Դրանից վոչ մի լավ բան դուրս չի դալիս բացի նրանից, վոր այդ ժամանակ ուռկանները փառում են:

Ի տարբերություն անհատական անտեսությունից, կոլտնտեսության մեջ ուռկանների թերի բեռնավորում չպիտի լինի: Յեթե արդարի զբություն կա, ապա այդ նշանակում և, վոր կոլտնտեսությունը մարդկանց վաս և բաշխել ըստ ձկնորսատեղերի, կամ վաս և հանգերծավորել նըրանց աշխատանքը, կամ իրենք կուտնականները չեն ձգուում ուռկանները կանոնավոր ուղարկութել:

Անհատական տնտեսությունների համար ուռկանների թերի բեռնավորումը սովորական յերկույթի եր: Վերջնենք թեկուղ մեծ ուռկանավոր ձկնորսներին: Յեղել են գեղքիր, յերբ մի ուռկան ձգելու տեղ մեկնել են միքանի տասնյակ կոմպլեկտ մեծ ուռկանավոր ձկնորսներ: Ստեղծվել և մեծ հերթ: Յուրաքանչյուր արտելի ամբողջ որբա ընթացքում հերթ եր համառում իր ուռկանը գործի գնել մեկ կամ յերկու անգամ, իսկ մնացած ժամանակ ուռկանն անդարձության եր մատանիած: Դուրս եր գալիս, վոր նա վոռում, «այրվում» եր արեհի տակ, մաշվում եր, սակայն ավելի քիչ արդյունք եր բներում, քան կարող եր բերել:

Ոյագես եր լինում մինչեւ անպամ այն ժամանակ, յերբ ձկնորսներն ունենին ձկնորսական այլ գործիքների, (որինակ՝ լողլորսական ուռկաններ)՝ գործնք կարելի յեր աշխատանքի քցել: Այդ սակայն ձկնորսությունը չեր կարող անել նախ այն պատճառուի, վոր նա կախում ուներ արտելի մրտա ձկնորսներից, յերիրորդ՝ այն պատճառով, վոր հաճախ նա չեր ունենում աղատ, սեփական նավակ: Ձկնորսական ուրիշ գործիքների անցնել, ստանց նախկինը թողնելու, մենակ ձկնորսի համար յերբեմն նմանապես չատ դժվար եր: Հետեանքը լինում եր այն, վոր լրիվ չելին սոցագործքում թե ուրիշ ձկնորսական գործիքները:

Պատճառն այսակե տնտեսությունը վարելու ձեփ մեջ է: Մանր, ցրված տնտեսություններն աշխատում եյին ամեն մեկն իր համար, իր ձեւերով: Վոչ վոր նրանց ուռկան ձգելու վայրերը և ձկնորսությունը հավասարապես չեր բաժանում: Վոչ վոր նրանց ձկնորսական գործիքները չեր մատակարարում պահանջման կերպով: Հետեանքը լինում եր այն, վոր մի տեղ իրար զիսի եյին կուտակվում չատ ձկնորսներ, միատեսակ ձկնորսական գործիքներով, իսկ ուրիշ տեղեր, վրանել թերեւս ձուկ քիչ և գորսում, կամ ձկնորսական ուրիշ գործիքներ են պահանջում, վորք բաթիվ ձկնորսներ եյին զնում:

Այս ամբողջ քառոս ու ձկնորսական գործիքների թերի ողտագործությունը միջամտ կերպվում է կույտերից տնտեսության մեջ: Կուտնականությունն անդամներին կանոնավոր բաշխում և բառ ձկնորսարարների նըրանց կանոնավոր կերպով զնում և հարկավոր գործիքներով, ձկնոր-

սական գործիքների ճիշտ հերթականություն և դնում, այդ գործիքների նկատմամբ ճիշտ խնամք և տանում: Կոլտնաեսությունը վորսը կազմակերպում է միաժամանակ ամեն տեսակ ձկնորսական գործիքներով, վորոնցով կարելի յեւ տվյալ ժամանակում վորսալ, կազմակերպում է ճիշտ ձկնորսություն բոլոր ձկնորսական վայրերում: Ահա, թե ինչու կուտանասության մեջ ամեն մի հնարավորություն կա ձկնորսական գործիքներն ողտագործելու լրիվ աշխատանքային բեռնվածությամբ: Այս դրությունն իհարկե աղաղովում և ձուկ վորսալու պլանների կատարումն ու գերակատարումը, արտինքն՝ ժամանակին բավարար քանակությամբ ձուկ և տալիս արդյունաբերական բանվորներին, վորոնք հարվածային է կերպով, մինչև այժմ չտեսնած համառությամբ ու արագութերով կառուցում են սոցիալիստական արդյունաբերությունը նրա համար, վոր մեր հետամնաց, դյուզանանտեսական յերկիրը դարձնեն արդյունաբերական՝ թե՛ արդյունաբերական և թե՛ դյուզանանտեսական բարձր տեխնիկայով: Միայն այդ ժամանակ կարվանա ձկնորսական տեխնիկան և կհեշտանա աշխատանքը: Դրա համար ել հարկավոր և, վոր կոլտնաեսականները կատարյալ դիտական և պատասխանատու վերաբերությունը տեղական գործիքներին, ինչպես և շինություններին, նախերին, մեքնաներին, տալով նրանց լրիվ աշխատանքային բեռնվածք, թույլ չտարով, վոր անտեղի անդոր ծության մատուցեն և փչացումներ տեղի ունենան:

Այսպիսով անհրաժեշտ և, վոր մենք կարողանանք դասնալ կուտարական և տեխնիկակես գրադեստ աշխատողներ: Մեզ հարկավոր և անտեսությունը կառուցել սոցիալիստական ձեռով: Սա նշանակում է, վոր մենք պետք ե խիստ խնայողաբար, հողատարությամբ վերաբերա վեռջ ուռիաններին և ընդհանրապես ձկնորսական գործիքներին, ինչպես և շինություններին, նախերին, մեքնաներին, տալով նրանց լրիվ աշխատանքային բեռնվածք, թույլ չտարով, վոր անտեղի անդոր ծության մատուցեն և փչացումներ տեղի ունենան:

Ահա այսուղ մենք կիսունք հենց այդ փչացումների մասին:

Անշուշտ, կոլտնաեսական ձկնորսներից յուրաքանչյուրը մտածում է, թե ինչու այսօքան չուտ ուռիանները փչանում են: Զնայած՝ ցանցը պատրսությամ և լավ ձկնորսական ցանցի նյութից, լավ մշակված և դարձած և, կրոլ կամ այլ ձեռնով ամրացրած, միանգամայն նոր և, բայց մի քանի ամիս աշխատելուց հետո միանգամայն անպետք և զառնում: Այդ գեպքում պատճում է, վոր ուռիանը պահպանում և իր գույնը, իր տեսքից ել կարելի յեւ յեղակացնել, վոր նա լավորակ և, պատառաված տեղերն ել քիչ են, բայց բավական և մի քիչ ձգել, համոզվելու համար, վոր նա չի կարող պահել այն ձուկը, վորի համար պատ-

Յանցերը լավ պահելու և պահպանելու խնկան ձեռքը սովորելու համար անհրաժեշտ և իմանալ, թե ինչից են նրանք փչանում:

Պարզվում է, վոր ամրող զաղանիքն այն թելերի մաղմղուկների մեջ և, վորից պատրաստվում են ցանցերը (թոռերը):

Այդ նուրբ թելերի հատկության պատճառով ուռիանը պահանջում է ամենահզուար խնամքն իր նկատմամբ: Դրա համար միքանի խոռը լողի ամենը, թե վորանդից և ինչպես են ստացվում այդ մաղմղուկները:

Ե՞նջ Ե ԲՈՒՍԱԿԱՆ ՄԱՂՄՁՈՒԿԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ՆԱ. ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎՈՒՄ

Յանցաթել և ձկնորսական պարաններ (ցանկապատ, արկան, կանան) պատրաստելու համար գործ են ածում բուսական թել (բամբակի, վուճի, կանեփի, ջութի):

Ձկնացին տնտեսության համար, մեծ նշանակություն ունեն վուշի, բամբակի, կանեփի մաղմղուկները: Այդ բույսերի թելերից պատաստվում են և այլ գործվածքներ, ինչպես՝ պարկեր, լարոն և այլն: Բուսական մաղմղուկն առանձին վերցրած հանգիսանում և տարրեր յերկարության նուրբ, մաղմղուկների մեջ այդ մաղմղուկները ցատուկ նյութով, վոր կոչվում ե «պեկտինյան նյութ»: Պեկտինյան նյութը վոչ միայն իրար և կազմնում այդ մաղմղուկներն այլև մաղմղուկներին այդ փնջերն ամրացնում, կաղցնում և ցողունին: Մաղմղուկները ծղոտի ամուր մասերից (բնափայտից) առանձնացնելու համար վուշը թրջոց են գնում, կամ փոռմ են գետնին, լորտեղ նա յենթարկվում և ցողի աղդեցության: Բնության մեջ գոյություն ունեն չափազանց մանր, հասարակ աչքով անտեսանելի կենդանի եյակներ՝ բակտերիաներ: Այդպիսի բակտերիաները մեծ քանակությամբ բաղմանում են նաև վուշի թրջած կամ խոնավ խթաթմբերի ներսում: Այդ բակտերիաները, վոչնչացնելով պեկտինյան նյութը, դրանով ողնում են, վոր բուսական մաղմղուկները բնափայտից պուկնին:

Կակլացնելուց հետո, վուշը ծեծում, քրքրում են, վորպեսի բնափայտի կոչտ մասերը փշըն, վորոնք այնուհետև զգելով հեռացվում են մաղմղուկներից: Դրանից հետո ստացված մաղմղուկները սահելով աղատում են ավելի մանր մաղմղուկներից և բնափայտի մնացորդներից, վորից ստանում են թափուկ և խծած: Այս բույր գործողություններից (թրջել, զգել, սանցել) հետո 100 գր. չոր վուշից ստացվում ե մոտավորական 16—18 գր. մաղմղուկի:

Ստացված մաղմղուկը գնում և գործարան, վորտեղ նրանից պատրաստում են թել և մանվածք: Կանեփի մաղմղուկներն ել և ստացվում այս ճանապարհով: Բուսաստանում նա կոչվում է ուղեկականեփի թել: Բամբակի մաղմղուկը վոչ թե կարծ և ցողունին, ինչպես վուշն ու կանեփինը, այլ նա պատճառ և հունգի (սերմի) չուրջը, վորը չափազանց նուրբ, սպիտակ (համախ և զեղանալուն) թելիկների մի փաթիլ և առատությամբ գուրս և լնկնում բամբակի հասունացած կնդուլից: Բամբակաղտիչ գործարաններում բամբակին աղատում են հունգից: Ստացված բամբակը մամլում են հակերի մեջ և ուղարկում գործարանները: Այնուեղ մեքենաները բամբակը վերամշակում են և գարճում թել և մանվածք:

ԹԵՂԻ ՎՈՐԱԿԻ ԿԱԽՎԱԾ Ե ՄԱԶՄՉՋՈՒԿԻ ՀԱՏԿՈՒ- ԹՅՈՒՆԻՑ

Հիմնական պահանջը, վորին ամուռ և բավարարի մազմղուկը, այդ այն եւ, զոր մազմղուկը պիտի տա ամուռ և ելաստիկ թել: Տարրեր բույ-
սերից ստացվում եւ տարրեր վորակի թել: Որինակ՝ բամբակի թելը,
վոր հայոնի յէ «Փիլդիկոս» անունով, նուրր եւ, փափուկ, բայց ամրու-
թյամբ նա հետ ե մնում փուչի թելից: Վուշը տալիս ե թե ամուռ և թե
նուրր թել: Բայց նա չուտ և մաշվում քան բամբակի թելը: Վուշի թելը
մի քանի ամիս աշխատելուց հետ քրքրում եւ և աշխատանքի համար
դառնում անողետք: Կանեփի թելն ընդհակառակը, տալիս ե շատ կողիս,
բայց ամուռ թել: Այսպիսով, թելի վորակն առաջին հերթին կախված
և մազմղուկի վորակից: Վորքան ամուռ և մազմղուկը, վորքան նա նուրր
և յերկար թելիկներից եւ, այնքան ավելի բավ ու ամուռ թել և ստացվում
նրանից:

Ինչպես մենք տեսանք, տարրեր բույսերից ստացած բուսական
մազմղուկի վորակը ապրեր եւ: Զկա այնպիսի մազմղուկ, վորն ապահո-
վեր թելի վորակն ամեն կողմից, ինչպես՝ ամրությամբ, նրբությամբ,
կոչունությամբ և յերկար դիմացկառությամբ:

Պրակտիկան ցույց ետքեւ, վոր բամբակն ու փուշը տալիս են ավելի
նուրր և կաչուն թել: Այլպիսի թելից պատրաստած ուռկանն ել համար-
փում եւ հենց «կպչում», ձևանու ավելի լավ և «շփոթեցնում»: Կանեփաթե-
լի մազմղուկը տալիս ե ավելի կողիս և հաստ թել: Այդ պատճառով ել
նրանից պատրաստում են մեծ ուռկաններ և այնպիսի ցանցեր, վորոնք
քամում են (ինչպես մեզ մոտ գործ են ածվում քթայները):

Զկնորսական թելի համար մեծ նշանակություն ունի նրա վորոր-
գածքը: Վորքան լավ են վոլորած առանձին թելերը, և այդ թելերն իրար
հետ, այնքան ավելի վորակավոր թել և ստացվում դրանցից: Լավ վորո-
րած թելը թրջելուց ավելի յէ ուժեղացնում իր ամրությունը:

Ի՞նչ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵ ՅԵՆԹՄՐԿՎԱՌԻՄ ՄԱԶՄՉՋՈՒԿԻ

Յենթմրենք, թե հենց նոր պատրաստեցինք ձկնորսական ցանցը:
Նա կազմված ե հավատարաշափ զասավղորված բջիջներից, այսինքն,
թելերից և նրանց միացնող հանգույցներից: Բոլոր այդ թելերն ու հան-
գույցները կազմված են բուսական մազմղուկից: Այժմ տեսնենք, թե ինչ
զրություններ ե ապրում այդ մազմղուկը, այսինքն՝ ինչպիսի փոփոխու-
թյուններ, և կրում նա արտաքին պայմանների աղղեցության դակ:

Ամեն մի բուսական մազմղուկ չափազանց զգայուն և շրջապատի
պայմանների նկատմամբ:

Տարրեր պայմաններում մազմղուկը փոփոխվում ե տարրեր կերպ:
Տեսնենք, որինակ՝ թե ինչ փոփոխություններ ե կրում մազմղուկը
ըրից:

Աղում շարունակ լինում են տաստ ջրային գոլորշիններ: Դրանում
հետ և համոզվել: Տաք, արևակեզ որից հետո, զոյ պիչերները՝ գետնի
փող ուղ և իջնում: Վոր բաշեղից առաջացած այդ ցողը: Նա ոդիջ եւ: Յե-
րիկը զետերից և խոնավ հողից բավականաշափ չուր և գոլորշիննում:

Այդ ֆուրը բարձրանում ե ողի մեջ, գոլորշու ձևով: Գիշերն այդ դո-
լորշինները սառչում են, անջատվելով ողից վորպես ջրային կաթիններ,
և նստում գիշերներն արդեն սառած գետնի և այլ առարկանների վրա:
Մառափուղը նմանապես խտացած ջրային գոլորշինների կաթիններ ե:

Այսպիսով ուրեմն, ոգում շարունակ ջրային գոլորշիններ կան: Տաք
ժամանակ գոլորշինները լինում են շատ, ցուրտ ժամանակ՝ քիչ: Դրա
համար ել, յերբ առջ ողն սկսում ե սառչել, ապա նա իր մեջ պահելով
իր հագեցման համար պահանջնող ջրի քանակը, ավելցուկ ջուրն աը-
տադրում և մառափուղի ցողի, յեղյամի, ձյան, անձրենների տեսքով:

Պարզգում ե, վոր մազմղուկն աղահությամբ կլանում և խոնավու-
թյունը: Խոնավ յեղանակներին կամ խոնավ շրջապատում մազմղուկի
մեջ թացությունը լինում և շատ, իսկ չոր և քամի ժամանակ՝ քիչ:

Թեև այդ խոնավությունն այնքան քիչ է լինում մազմղուկի մեջ, վոր
կարելի յէ չնկատել, սակայն նա աղղեցություն և գործում մազմղուկի
վրա:

Մազմղուկի վրա խոնավությունն աղղում ե ողի հետ միատեղ:

Ողը կազմված ե գանազան գաղերից: Ողի բաղադրիչ, ամենալոր-
ծոն գաղերից մեկը թթվածինն ե: Խոնավության հետ միասին մազմղու-
կի ներսը թափանցելով, թթվածինն աստիճանաբար քայլքայում և
մազմղումը:

Այդ գեղքում, վորքան շատ են խոնավությունները մազմղուկի մեջ,
և կորքան նա հաճախ թթվածում ե, այնքան ավելի ուժեղ և ընթանում
մազմղուկի քայլքայումը: Այնքան ավելի շատ ե, ուրեմն,
թելը կորցնում իր ամրությունը:

Այստեղ պետք ե նկատի ունենալ դարձյալ մեկ դրություն: Պարզ-
վում ե, վոր մազմղուկի փոփոխումն ուժեղ կերպով կապված ե և ներ-
մությունից: Յուրաք ժամանակ մազմղուկի քայլքայումը խոնավության
և ողի աղղեցությունից լինում և ավելի դանդաղ, իսկ առաք և սատկա-
պիս չոր ժամանակ, արդ քայլքայումը կատարվում և ուժեղ և արագ:
Սրեւ կիդիչ ճառագայթների տակ և ողի (թթվածնի) աղատ ներս խցկվե-
լու ժամանակ խոնավ ուռկանը շուտով կորցնում և իր ամրությունը և
շարքից ընկնում ե: Թե ինչպիսի աղղեցություն ե ունենում լույսը
մազմղուկի վրա, այդ դեռևս ճշտությանը չի վորոված, սակայն յեն-
թաղքում են, վոր նա թուրացնում և մազմղուկի ամրությունը:

Այսպես ուրեմն, ամեն մի կոլոնտեսական ձկնորսի համար պետք
ե պարզ լինի, վոր մազմղուկի փշացման հիմնական պատճառը հանդի-
սանում և նրա կրած փոփոխությունը խոնավության, ողի (թթվածնի)
և ջերմության աղղեցությամբ, վրա համար պետք ե հողալ, վոր աշխա-
տանքից զուրս ցանցերը (ուռկանները) պահպին չոր դրությամբ և
չթունել, վոր նրանք «խաչվեն» արևի տակ:

ՈՒԽԿԱՆՆԵՐԻ ՓՀԱՅՄԱՆ ԴԼԻԱՎՈՐ ՊԱՏՃԱԱՌՆԵՐԸ

Ուռկանների փշացման գլխավոր պատճառը նրանց փուռմն ե:
Ի՞նչ և այդ փուռմը:

Մենք արենք գիտենք, վոր բանության մեջ գոյություն ունեն անտե-
սանելի, չափազանց փոքրիկ կենդանիների եյակներ՝ բակտերիաներ (մանրե-
ներ): Այդ եյակներն այնքան փոքր են, վոր հասարակ աչքով նրանց

տեսնել չի կարելի : Նրանց կարելի յեւ տեսնել միայն հատուկ ապարատ՝ (միկրոսկոպի) ողնությամբ, վորը կաղմված է չափազանց խիստ մեծաց-նող ապակիներից :

Մենք տեսանք, վոր մի շաբթ բակտերիաներ քայլայում են պեկ-տինյան նյութը, վորն ամրացնում եր մաղմղուկը ցողունի բնափայտին (ցողունի կոչում մասին) :

Այս գեղքում բակտերիաները կատարում են մեզ համար ոգտակար աշխատանք, ողնելով մաղմղուկը բաժանելու բնափայտից : Սակայն մյուս բակտերիաները համարվում են փուեցման, այսինքն՝ ուռկանի փշացման պատճան : Դրանք, այսպես կոչված՝ փուեցնող բակտերիաներն են : Փուեցնող բակտերիաներն ընկնելով մաղմղուկի մեջ, փուեցնում են նրանց :

Փուեցնող բակտերիաներն ընդհանրապես բազմանում են այնաեղ, վորուել նրանց համար կան նպաստավոր պայմաններ :

Այդ նպաստավոր ըրջապատից մեկն ե, ամենից առաջ, համարվում եթաց և տաքացրած մաղմղուկը, վորից պատրաստած և ուռկանի թելը :

Թաց և տաքացրած մաղմղուկի մեջ բակտերիաներն աճում, բազմա-նում են մեծ արագությամբ և մեծ քանակությամբ, և արագությամբ քայլայում մաղմղուկը : Ահա, թե ինչու ջրում թրջած, ջուրը լավ չքա-մած, այսինքն՝ խոնալ ուռկանը, վորը կիսում դցած և տաք ժամանակ (համապես խիստ չոդին), սկսում ե «խաչվել» : Այդ «խաչվելը», (ալե-լի ճիշտ փուռմը) այնքան ավելի ուժեղ ե, վորքան չոդ և յեղանակը : Ընդհակառակը՝ վորքան ողը զով ե, վորքան ուռկանը լավ և չո-րացրած, վորքան նա ուժեղ և քամհարության յենթարկվել, այսինքն՝ չորացել և հովացել քամուց, այնքան ավելի դանդաղ և կատարվում փուռմը :

Ուռկանը փշանում ե վոչ միայն ողում, այլև ջրում : Մերձափնյա և խմբու ջրերում ցանցերը փշանում են ավելի չուտ, քան ջրի խորքում և աղային ջրերի մեջ :

Ինչի՞ց և այդ կատարվում :

Ավելի մոտ ջուրը շարունակ ավելի տաք և լինում : Բացի դրանից, ավելի մոտ ավելի չատ են լինում բերածո նյութերը : Բերածո նյութերը փուռմ են և փուեցնող բակտերիաների բուն են հանդիսանում : Բացի դրանից, ծանծաղ և մերձափնյա ջրերում մեծ քանակությամբ հավաք-վում են ջրային բույսեր և կենդանիներ : Մահանալով, նրանք նմանա-պես բազմացնում են փուախտը : Փուռմ կառարվում և նմանապես աղա-յին ջրերում, ապակին այնաեղ փուռմը լինում և դանդաղ և աննկատելի :

Այսպիսով, փուախտի տարածման պատճառները՝ կեղտերն ու բերա-ծոներն են : Նրանք փշանում են ցանցերը, վաշակելով նրանց փտեցնող բակտերիաներով :

Այսուամենայնիվ, վոչ մի փակցնող բակտերիա սոսկալի չի լինի, յեթե ցանցերին վերաբերվեն խնամքով և գիտակցարար : Համար կոլ-տնտեսական ձկնորսն ինքն և հանդիսանում ուռկաների փշացման և փտեցման մեղագորը :

Անհատական տարբերային տնտեսությունից մեզ ժառանգություն և մասցել հետամնացությունը, վորի գեմ պետք և պայլարի մեր կոլ-տնտեսականը, վորպեսզի այդ դրությունը / չսուեղծվի : Անհատական

մանր տնտեսությունը, արտադրության վատ կազմակերպման հետևան-քով, չափազանց քայլայիչ եր : Ավելի քայլայիչ եր կուլակային տնտե-սությունը : Մանր և խոչոր անհատական տնտեսություններն ապրելով ըստ «որը կերակրում ե տարրուն» առակի, ձկնորսական ուղեգնացության ժամանակ մեծ պայլար եյին մղում ձկան համար : Այդ պայլարում, չատ դեպքում բանը հասնում եր մինչև հակառակորդի ուսկանների փշացման, դիմ ձկելուն, մինչև իսկ արյունահեղ ընդհարումների : Ձեկ-նորսական ուղեգնացության այդ յուռա ժամանակ, ել ավելի մոռա-ցության եր տրվում ձկնորսական գործիքների կանոնավոր խնամքը : Որինակ՝ վատ եյին լվանում ուռկանները, չորացնելու ժամանակ խիտ-խիտ եյին կախում ուռկանները և դեռևս չչորացած՝ չլրտում եյին հեղձուցիչ, կամ չոդ նավախորը, վորտեղ նա արագությամբ սկսում եր փտել : Հաճախ ձկնորսական նավակում լինում եյին շատ կեղծեր և նեխած, ապականված ջուր : Ռուկանն ուղղակի նրանց մեջ եյին շղբառում : Զրից հանած ուռկանը հաճախ յերկար ժամանակ արևելի կիպիչ ճառագայթյունների տակ եր մնում :

Յախատներն ու ամրաբները, վորոնց մեջ պահում եյին ուռկանները, համարյա բոլորը լինում եյին խոնավ : Հաճախ, կույտերով հա-վաքած ուռկանները ձյան տակ եյին մնում և ձկնորսը զարմանում եր, թե ինչու յեն իր ուռկանները փտում : Հաճախ ել ուռկանների վրա հա-վերը կամ չներն եյին դիմում : Հավերի աղբն ել և քայլայում ցան-ցերը : Զրից կամ ձյունից խոնավացած ըները նույնավես խոնավությունը տալիս են ցանցերին, իսկ խոնավությունն ստեղծում և նպաստավոր պայմաններ քայլայիչ, փտեցնող բակտերիաների համար :

Նման անտնտեսավարական, կործանարար վերաբերմունքը դեպի ուռկանները անհատական տնտեսությունների համար սովորական եր : Կոլտնտեսական ձկնորսներն անհաշա պայլար պիտի մղեն ձկնորսական գործիքների հանդեպ նման վերաբերմունք ցուցաբերողների դեմ :

Մատնանշենք դարձյալ մի կարեւոր մոմենտ : Մենք արդեն ասել ենք, վոր խոնավ և տաքացրած մաղմղուկը քայլայիլում և թթվածնի (ոդի բա-ղադրիչ մասը) աղղեցության տակ : Մի շարք ձկնորսներ ուռկանները կրոտեւց հետո անմիջապես կախում են արեւի տակ, մինչև իսկ այն ժամանակ, յերբ քամի չկա և խիստ չոդ ե : Ահա հենց այսուել, այդ ձկնորսներին դժբախտություն և սպասում : Ուժեղ տաքացման ժամա-նակ կիրա ուժեղացնում և թթվածնի աղղեցությունը խոնավ ուռկանի վրա, զբա համար մաղմղուկի քայլայիլումն ուժեղացնում և արագանում և ուռկանը շուտով կորցնում ե իր ամրությունը :

Մտացիւմ ե ճիշտ նրա հակառակը, ինչի ճգույնում եր ձկնորսը : Նա ցանկանում եր զբանով պահպանել ուռկանը փտումից, սակայն դորձնականում սահացնում և այն, վոր փշանում և ուռկանը, վաղա-ժամ դուրս զցում շաբթից :

Անհրաժեշտ ե շեշտել, վոր ուռկանի փտումն ու թթվածնի աղղե-ցությունը նրա վրա կատարվում և միաժամանակ, կարծես լացնությունը մեկ-մեկու : Թե վորումը և թե թթվածնի, աղղեցությունը, ինչպես մենք արդեն վիտենք, ուժեղացնում տաք և հակառակես շատ չոդ որե-րին : Այս նշանակում ե, վոր յեթե լվացված և խոնավ ուռկանը փոփի ողղակի արեւի տակ այդպիտի չոդ որերին, նրա մեջ կկատարվի թե

փտում և թե թթվածնի ազգեցություն։ Վորքան ուռկանը չօրացվում է, այնքան փտումը դանդաղում, իսկ վորքան նաև տաքացվում է, այնքան թթվածնի ազգեցությունը մեծանում է։ Ահա թե ինչու ուռկանների չորացման ժամանակ պետք է խուսափել նրանց շատ տաքացնելուց։

Այսպիսով, հետամնացությունը, վորն անխոսափելիորեն թագա-
վորում էր անհատական տնտեսություններում, ամենից շատ պատճառ
եր գառնում ուռկանների շուտ փշացման։ Պարզ է՝ այն ձկնորսը, վոր
սովոր և աշխատել այնպես, ինչպես ինքը դիմե, ինչպես աշխատել են
իր հայրն ու պապը, ապա նաև կոլտնտեսություն և բերում նաև իր այդ
սովորությունները։ Ահա, թե ինչու շատ դեպքում կոլտնտեսության
միջ կրկնվում են գիրե նշած թերությունները։ Դրանցից վճռականարար
պետք է հրաժարվել։

Կոլտնտեսությունն աշխատում է բրիգագներով։ Յուրաքանչյուր
բրիգադ ամբացվում է ձկնորսական գործիքների վորոշ քանակության։
Այս լավ գործ է, քանի վոր յուրաքանչյուր բրիգադ գիտի, վոր պատառ-
լանառու յե ձկնորսական գործիքները ճիշտ ինամելու և պահպանելու
համար։ Բրիգադը ձկնորսական գործիքները բաժանում է ողակների
միջեւ։ Հատկապես ողակներում պետք է աշխատողների ուշաղբությունը
հրամիրել ձկնորսական գործիքների ճիշտ ինամքի և պահպանության
վրա, քանի վոր գործիքներն ողակումն են բանեցվում։

Ուռկանի փշացման մյուս պատճառներից անհրաժեշտ է շեշտել «զու-
ման»։ Նո առաջ է գալիս եկի բակտերիաների չնորհիվ։ Դրա զեմ պայ-
քարելու միջոցը զենուս չի դանված։

Ուռկանների փշացման հետեւյալ, ամենակարեսը պատճառներից մե-
կը մեխանիկական լինավածքներն են, վոր ստանում է ցանցի կտավը
(պատառութելլը, զգիւր և այլն)։ Զենային արտադրության յուրաքան-
չյուր գիտակից բանվոր, կոլտնտեսական պիտի գիտենա, վոր մեխանի-
կական փշացումները ցանցերի արագ փշացման գլխավոր պատճառներից
մեկն են։ Բայտկան և պատուել մեկ բջիջը, վոր ստեղծվի ուռկանի ան-
հավասար ձգվածություն։ Պատոված բջիջի շորջը գնավուղ բջիջներն
ստանում են մեծ ընդունավորում, վարովիւտե բացի ջրի ճնշմանը դի-
մադրելուց, պետք է հաղթահարեն և պարբերվող զգզված մազերի ուժը։
Ուռկանի անհավասար ընդունավորումն առաջ է բերում ուռուցքներ, իսկ
թույլ, փամած մասերում նոր պատճառներ։

Հաճախ ձկնորսը մատու փորձում և ուռկանի ամրությունը և բջիջ-
ները կարվում են վոչ թե մեկ, այլ միքանի տեղից։

Հենց դրանով ձկնորսը փշացնում է ուռկանը, նպաստելով նրա վա-
ղաժամ ժամանելու։

Պեսի և լավ հիշել, վոր ուռկանի վորակը (ամրությունը) բջիջները
կտրտելու ներկ վորմելիս ամերածեշտ և դրանից հետո կարել կտրտված
անդեմը։

Ուռկանի վրա կտրտվածքներ առաջ են գալիս նաև նավակի մեջ,
վորունի լինում են ճանկիչներ, զուրս ցցված ցախեր և այլն։ Դրա հա-
մար պետք է հետեւել, վոր նավակի և նայի հատակն ու չըջնորը լինեն
ամրուր և փողորկ, առանց ճանկիչների։ Ուռկանը կտրտվուա և նմանա-
պես ջրի առկ զանմած ճանկիչներից, բույսերից և այլն, վորունի ճան-
կում են ուռկանը։ Վերջապես, ուռկանին կտրտում է և ձուկը։ Դրա

համար անհրաժեշտ և հաճախակի նորոգել ուռկանը։ Վորքան մենք
ուշադիր լինենք դեպի ուռկանի նորոգումներն ու նրա ամբողջությունը,
այնքան նաև յերկար կծառայի, վորի չնորհիվ մենք սոցիալիստական
մրցակցությամբ ավելի նվաճումներ ձեռք բերած, կվերջացնենք ձեռոր-
սական շրջանը։

Ուռկանների համար մեծ չարիք են հանդիսանում և մի չարք ինց-
գետանման կենդանիները։ Այսպես որինակ, Վորդակասպյան շրջանում
ուռկանների վրա յեն պրծում կողալորդները («օշօհօրա»), Հեռավոր
Արևելքում՝ կապրելլաները, Հյուսիսային ծովերում՝ իդո-
տեյանները (ծովային խավարասեր միջատներ), կողալորդները
(«օպահար»)։ Այդ վորքիկ խեցգետնանման կենդանիները կրծում են
թելերը, վորից ուռկանը չի կարողանում պահել մինչև անդամ ձեռների
թույլ թափահարումը։

Վերջապես, ուռկանի վհանուլը կախված է նրանից, թե ինչպես և
պատրաստված նա։ Վաս ձգած հանդույցներն ստեղծում են ուռուցք-
ներ և ուռկանը պատառությունը և անհավասար ձգվածությունից։ Յերբ
ուռկանը ջուրն են ձգում առանց հաշվի առնելու տեղի դրությունը, այդ
և յերբեմն նեխած պարանը, ճիլքերի պատճառ են զանում։ Ուռկանը
ձգելուց առաջ պետք է նրա բոլոր թելերը, պարաններն ուղղել, այնպես,
վոր հետազարմ վոլորված տեղեր չառաջանան։ Լողանների և ուռ-
կանների այլ հարմարությունների վատ դասավորությունն առաջ և բե-
րում ուռկանի խեցգետություն, և թելերը քրքրվում են։

Այս բոլորն ասում են, վոր հարկավոր և ուշադրությամբ վերաբեր-
վել ձկնորսական գործիքների հետ։ Ինչպես մենք տեսանք, ուռկանը
շատ թշնամիներ ունի։ Կոլտնտեսականի և բանվորի խնդիրն ե՝ վորքան
կարելի յե պահապանեցնել այդ թշնամիների թելը և ստիպել ուռկանին,
վոր նա աշխատի վորքան կարելի յե յերկար ժամանակ։

ՊԱՅՔԱՐԻՐ ԿՈՒԼԱԿԱՑԻՆ ԱԳԻՏԱՑԻԱԾԻ ԴԵՄ

Վերը մենք ասացինք, վոր անհատ տնտեսավարը մանելով կոլտն-
տեսություն, իր հետ բերում է իր սովորությունները, իր հին մորեր,
սովորությունները կամ, ինչպես ասում են՝ իր տրադիցիանները։ Ի հարկեւ,
այց հին վորքից և սովորություններից մի չարք բաներ ողնում են ուռկան-
ների պահպանան գործին։ Որինակ՝ դարերով մշակված այն ձկը, վոր
դարձում են ձկնորսական պիտույքները, վորն արգեն իր պատվամորը
տեղն և դրավում Վորդակասպյան շրջանի ձկնորսական արհեստադրո-
ւության մեջ։ Զգաբաղած ձկնորսական պիտույքներով աշխատանքն
այժմ միայն ծիծաղ կշարժի և ծաղրի առարկա կդատնա։

Բայց անհատ տնտեսատերը մանելով կոլտնտեսություն, իր հետ բե-
րում է նաև շատ անպետք և մինչև անդամ վիտակար սովորություններ։
Մի շարք փաստեր արդեն վերեկ հիշված են այդ մասին։

Ամենավլասմորը, վոր նորություն և համարվում կոլտնտեսություն
մտած յուրաքանչյուր մեխանտեսի համար, և վորը նա պետք է հաս-
տատապես յուրացնի, այդ այն է, վոր նոր ձկերով պետք և վարդել
ձկնորսական գործիքների հետ։ Նա սովոր և ուրիշի զորդիքների հետ
վարդել անտարբեր, իսկ յերբեմն ել, յեթե ձեռնուր յուրաքանչյուր

կշացնում եր ձկնորսական այդ գործիքները։ Մենատնտեսի համար ամենամռտիկն իր սեփական գործիքներն ելին, վորոնց հետ նա վարվում եր այնպես, ինչպես կարող ե։

Մտնելով կոլեկտիվ տնտեսություն, նա հին սովորության համաձայն կոլտնտեսության գործիքների հետ վարվում ե վոչ թե ինչպես «իր սեփական» գործիքների հետ, այլ կոլտնտեսության գործիքներն ել արա համար «ուրիշ» գործիքներ են թվում, և նա այդ ձկնորսական պարագաներին անտարբեր ե վերաբերվում։ Կոլտնտեսությունն արագուն պիտի թողնի իր այդ սովորությունը։ Մենք մի քիչ խորը քննելով այս խնդիրը, կհանդենք այն յեղակացության, վոր կոլտնտեսության այդ գործիքները պահանջում են ամելի մեծ պատասխանատվություն և հոգածարություն, քան այդ յեղել և անհատական տնտեսություններում։ Անհատական տնտեսության մեջ գործիքների վատ խնամքն ու անտարբեր վերաբերմունքը վնաս են բերում միայն իր տնտեսությանը, իսկ կոլեկտիվ տնտեսության մեջ անհոգությունն ու վատ վերաբերմունքը դեպի գործիքները՝ առաջին հերթին հարվածում և ողակի, ամբողջ ըրդադիր վատակին։ Արդ առաջին հերթին հարվածում է ամբողջ կոլտնտեսության արդֆինալանին, յերկրորդ՝ շատ կոլտնտեսություններում, յեթե նման անտարբեր անդամներ շատ կան, այդ դրությունը հարվածում է վորսի պլաններին, այսինքն՝ արդյունաբերական բանվորներին, ժյուս կոլտնտեսականներին ձկնույթ անելու գործին, վորոնք ձբդառությունը և անհարարի ձկնորս-կոլտնտեսականների զանազան պահանջները (կոչիկ, հագուստ, հաց, ուսելիք և այլն)։ Վերջին հաշվով այդ դրությունը հարվածում ե և ձկնորս-կոլտնտեսականներին նրանց նյութական ապահովության կողմից։ Ահա, նման հետևանքներ ունի անհոգ և անտարբեր վերաբերմունքը դեպի ձկնորսական գործիքների խնամքն ու պահանջմը։

Շատ հաճախ նաև այնպես ե լինում, վոր ձկնորս-կոլտնտեսականի այդ սովորական անտարբեր և անհոգ վերաբերմունքին միանում և նաև գիտակցությար անտարբեր ու վնասարար վերաբերմունքը ձկնորսական գործիքներին։ Իր սովորությամբ անհոգ ձկնորսը յերեմն՝ ցանցին վերաբերվում և այն առածի համաձայն, թե «ինչպես ել լինի, յուշ կտանի», և դրանով նա վոչ թե ինամում ե, այլ ուղղակի վնասարարություն անում։ Ցանկանում ե նա այդ, թե վոչ, բայց այդպիսի կոլտնտեսականը հարվածում է իր ըրդադիրն, իր կոլտնտեսությանը, և նման վատ աշխատանքի հետևանքը լինում է այն, վոր նա ոգնում է կոլտնտեսության դեմ մղվող կուլակային աղիտացիային։

Կուլակը խորամանկ թշնամի յե։ Ամեն մի մանր-մունք բանից նա պարագատ և բանել, նա պատրաստ և ողագործել ուղածդ տնտեսական անկանոնությունը, վորպիսի կամ քայքայի կոլտնտեսությունը կամ մալորեցնի այն ձկնորսին, վորը զանվում է կոլտնտեսության շեմքին, սուեյզ, թե «տեսնո՞ւմ ես, կոլտնտեսության մեջ ուոկանները փառում են, չեն կարողանում անտեսություն վարել, զո՞ւ ուր ես մտնում»։ Իսկ կարանտեսության մեջ լավ այխառող, գործիքները լավ խնամող կոլտնտեսականին, վորը տեսնում է հարևանի անտեսավարական վերաբերմունքը, և ինչպես ասում են՝ «սրտի ցավ և զգում»։ նրան կուլակը կամ՝ «տեսնո՞ւմ ես, ձեզ մոտ, միհնույն ե, վոչինչ դուրս

չի զալիս։ չուտ արա դուրս յեկ կոլտնտեսությունից»։ Կուլակային նման խոսակցություններ կարելի յել լավ ամենուրեք։

Մի շարք կոլտնտեսություններում կան նաև թագնված կամ թագնըող կուլակներ, մի շարք կոլտնտեսություններում ել կան մարդիկ, վորոնք չնայած կուլակ չեն յեղել, բայց ինչ-ինչ ճանապարհներով նրանց հետ տնտեսական կապ են ունեցել։ Դրանցից շատերն անում են այն, ինչ կոլտնտեսություն խցկված կուլակը։

Նրանք անում են ամեն ինչ, միայն թե կոլտնտեսությունը պառակտեն ներսից։ Կուլակներն ու նրանց նման ողնականները ջանք են գործ գնում, անգիտակից և մոլորով կոլտնտեսականներին սովորեցնելով, վոր անհոգ և վնասարարությամբ վերաբերվելն ձկնորսական գործիքներին։ Կուլակն ու նրա աղենաները ջանում են կոլտնտեսականների արյան մեջ սրսկել անտեսավարությունն ու անհոգությունը։ Նրանք անում են այս բոլորը նրա համար, վոր կոլտնտեսականի մեջ նորոգեն սեփականատիրական զդացմունքները և կոլտնտեսականի մեջ առաջացնեն վատ վերաբերմունք հանգելով կոլտնտեսության ինվենտարի, վորպիս «ուրիշ», վորպիս «վոչ սեփական» գործիքների։ Նա, ով յենթարկվում է կուլակային այդ աղիտացիային, դառնում է կուլակի աղենաը, նրա զինակիցը։ Կուլակը հրճվում է, վոր կարողացալ կատարել դավաճանական այդ գործը։

Քիչ չեն այնպիսի դեպքերը, յերբ ձկնորսական գործիքների ստուդման, կամ հասարակական պահանտին հանձնելու, ժամանակ, մի շարք կոլտնտեսականների ուոկանները պատաժ են լինում միապաղակ կանաչով (ջրեմառ և այլն), լվացքած, բավականաչափ չորացրած չեն լինում կամ լինում են վաղաժամ փատաճական աղիտացիայի պտուղն և չին վնասակար սովորությունների հետևանքը՝ «խորթաբար» վերաբերվել կոլտնտեսության ինվենտարին։ Դրա համար յուրաքանչյուր կոլտնտեսական պետք ե զինի իրեն կուլակի աղիտացիայի դեմ վճռակեալ պայքարելով, վորը ճարպկությամբ ոգուածործում է հին սովորություններն ու սեփականատիրական արամադրությունները, վոր դոյցություններն մի շարք կոլտնտեսականների մեջ։

Մեր տված խորհուրդներից ու ցուցումներից և վոչ մեկն ի վիճակի չինի կատարել կոլտնտեսականը, յեթե նա անհաշտ պայքար չմղի կուլակային աղիտացիայի դեմ կոլտնտեսության ներսում։

Ձկնորսական գործիքների լավ խնամքի և պահելու ճգտումն իրականացնելու համար կուլտնտեսականը պետք և պայքարի իր հին սովորությունների, կուլակի ու նրա աղենատրայի վատնձգությունների դեմ, պիտի նրանց զիմանականությունը լավ կարգանական աղիտացիայի լավ խնամքի և պահելու հարվածի լավ խնամքի աղիտացիայի դեմ կուլտնտեսականների դեմ։ Ամհրամեշտ, վոր յուրաքանչյուր կուլտնտեսական սոցիալիստականությունը վերաբերվել է ձկնորսական գործիքներին։ Նա պետք է վարքան կարելի յեկ զարգացրած չետ, հիշելով, վոր ինքն աշխատ ուությունների հետևանքը լինում է այն, վոր նա ոգնում է կուլտնտեսության դեմ մղվող կուլակային աղիտացիային։

Ձկնորսական գործիքներն աղելի լավ պահելու և խնամելու համար կուլտնտեսության վարչությունը պիտի բարձրացնի կուլտնտեսականների պատասխանատվությունը զիմանը պետք և պահելի այդ գործիքները։ Դրա համար այդ գործիքները պետք է ամրացնել յուրաքանչյուր ողակի ամբողջ ամորտի-

զացին ըրջանի համար, տքսինքն՝ մինչև ցանցի մաշումը։ Պետք է նմանապես նշանակել նորմա, թե տվյալ ձևնարսական ըրջանում յուրաքանչյուր ողակ քանի նոր ուռկան պիտի ստանա, հաշվի առնելով հների վերանորդումը, ինչպես և այդ գործիքների փշացման, մաշվածքի տոկուը։ Պետք է խիստ հսկել, վոր այդ նորմաները չխախտվեն։ Այն ողակը կուը։ Պետք է խիստ հսկել, վոր այդ նորմաները չխախտվեն։ Այն ողակը, վորի գործիքները ժամանակից չուտ են փշացել (ի հարկե անհոգությունից), պիտի հատուցի իր աշխատավարձով, խել այն ողակը, վոր յերկար ժամանակ և աշխատեցրել գործիքներն ու գերակատարել և արգիքինալիք՝ պիտի պարզեատրվի։

Բացի գրանից, պետք է գործիքների ճիշտ անպիտում լինի, այսինքն՝ պետք է նշանակել այդ գործիքները պահելու և խնամելու կանոնավոր հակոգություն և ճիշտ կերպով պիտի վորոշել, թե տվյալ ցանցն իրոք անպետք է, թե վոչ։ Պետք է ձգտել, վոր անպիտում գործիքներ զատողն աշխատի վոչ միայն, վորսի, աշխատանքի ժամանուկ, այլև նրանից դուրս։ Նրա աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, վոր նաև կուտանտեսության կից ունենա մի փոքրիկ փորձնական լարօրատորիա և մի շաբք փոխադրելու գործիքներ՝ ձկնորսների մոտ մեկնելու և այնաեղ աշխատելու համար։ Կուտանտեսության վարչությունը հաճախ պիտի ստուգի նրա աշխատանքները և ողնի նրան հատկապես այն ժամանակ, յերբ նա ընդունում է նոր ցանցեր, գործիքներ և վորոշում և մաշված ուռկանների արժեքը։

Պետք է նմանապես հիշել, վոր գործիքների անպետքությունը վարչելը համարվում է նոր մեթոդ, այդ պատճառով ել նրա չուրջը շատ վիճարանություններ կլինեն։ Կուլակն, ի հարկե, չնառում է այս հանգամանքն ել ողտաղործել հակա-կոլտանտեսացին աղիտացիայի համար։ Նա չանում և կորոնտեսության համար խիստ կարեոր այդ աշխատանքը խախտել, փոխելով նրա իմաստն ու նշանակությունը։ Կուլակային նման ադիտացիա սովածելի յե, դրա համար պետք է պատրաստվել պարքարելու կուլակի դեմ նաև մյուս բնադրապառում։

ԽՆՉՊԵՍ ՊԱՀՊՈԱՆԵԼ ԶԿՆՈՐՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻԸ

Ձկնորսական գործիքները պահպանելու համար գործ են ածվում շատ ձեւեր։ Ցույց տանք, որինակ, ուռկանների կոնսերվացումը, նրանց կանոնավոր խնամքն ու հսկողությունը։

Կոնսերվացում է ուռկանի վերամշակումն այնպիսի նյութով, վարն ապահովում է ուռկանը չուտ փշացումից։ Նման վերամշակման շատ դեղատառներ կան։ Դրանցից ամենազորնականներն են՝ դարագելը, կրոտելը, ճյութելը, յուղութելը և ծիսում։

Կոնսերվացուցիչ նյութերից մթքանիսը գործ են ածվում նրա համար, վոր թույլ չտան ուռկանը փտի և թելերը քրքրվեն (դարագում, ճյութելը, ներկելը)։ Մյուս կոնսերվացուցիչ նյութերը գործ են ածվում ժաման փտեցման առաջն առնելու համար։ որինակ՝ կրոտելը, ծիսումը։ Մնացած նյութերը (զանազան ներկերը) գործ են ածվում նրա համար, վոր շատացնեն վարօը։ Այդ գեղքում ուռկանը ներկում են ջրի գույնի։ Մի շաբք ներկելը հանդիսանում են նաև փտեցման առաջն առնելու մի-

ջոց (որինակ պղնձարձասպը)։ Ուռկանների ներկելն ունի մի նշանակություն ել, վոր նա չի թողնում թեկն արեի լույսից քայլայիլի։

Գոյություն ունի ուռկանների յերկու տեսակ. առաջինը՝ նուրբ, կամ կտավախոտ կոչված ուռկաններն են։ Նրանք պետք ել լինեն բավականաչափ նուրբ և կողչուն։ Նրանք, ինչպես առում են, «շփոթեցնում» են ձկներին։ Այդ ուռկանները վերամշակվում են՝ դարագելով, կրոտելով, թեթև կերպով ճյութելով, ներկելով, մի խոսքով այնպիսի յեղանակներով, վոր ուռկանը չպահնա կոչա, վոչ կողչուն։ Նուրբ ուռկանների համար հաջողությամբ կարելի յե գործադրել ծիսում։

Ուռկանների մյուս տեսակը հաստ և այլ տեսակի թոռերն են, ինչպիս՝ մեծ ուռկանները, քամողան թակարգները և այլն, վորոնք վերամշակվում են յուղակելով և ճյութելով։ Այսպիսի վերամշակումը միքանի նպատակներ և հետազողում։ Առաջին նպատակը թերերը փառմից աղատելն է։ Յերկրորդը՝ թելերը քրքրվելուց պաշտպանին է, վոր կատարելում ենավի շրջեցնին քայլելուց, հողին քավելուց, փոկելը ճգլելուց և այլն։ Ծնդհանրապես այդ վերամշակումը նպատակ ունի ուռկանի թելը դարձնել ամուր, դիմացկուն։

Պետք է տաել, վոր ամեն մի վերամշակում, լինի դա դարակում, կրոտում, յուղուտում, ներկում, թե ճյութում՝ միննույնն է, ամեն մեկն ունի իր վորեւ պակասությունը։ Որինակ՝ գարազելուց հետո թելը միքիչ կորցնում է իր ամրությունը, կոշտանում է։ Կրոտելուց հետո՝ թելը միքիչ թուրանում է։ Զյութելն ու յուղուտելը թելին տալիս են այնպիսի հապելություն, վոր ցուրտ ժամանակ ջարդվում է, տաք ժամանակ՝ սունձի նման կողչում։ Միքանի գեղքում ել դարագելի իջցնում է ուռկանի վորսի քանակը, քանի վոր ձկները փախչում են զույնից։

Վերջապես, բոլոր յեղանակներն ել վատ կիվան, յեթե վարպետորեն չոգուագործվեն։ Որինակ՝ յեթե կրկնակի դարագումը ճիշտ չկատարվի, ուռկանի թելերը բավական կկորցնեն իրենց ամրությունը և նա չուտով կանոնեատքանա։ Դարագելու ժամանակ յեթե ուռկանը պահանջման ժամանակամիջոցում չսպահվի՝ այդ նյութը չուտով կկորցնի իր ազդեցությունը։

Ծնկեր կորոնտեսական, յեթե դու ուղում ես, վոր քո ձեռքին աշխատող ուռկանը յերկար ժամանակ զիմանա, ասա պահչիր հետույալ կանոնները։

1. Զբից դուրս հանած ուռկանը վորքան կարելի յե հանախ լվացիք, յիշցիք լորանինքը, ազատիք ուռկանն ամեն տեսակ աղբերից։
2. Ուռկանը լավ լվանալուց հետո մի շաբտիք լորանինքով կեղուուց անմաքուր տեղ։

3. Մի բույլ տուր, վոր խոնավ ուռկանը յերկար ժամանակ կույտ դառան մենա, հատկանես շոգ որերին։ Յեթե այդ հեմարավոր չե, ապա ձածկիք արևի հառավայր ներից և հարմարություն առեղջիր ժամու ներս դամանցելու համար։

4. Տոր որերին ուռկանը մի չորացնի արևի տնկ։ Աշխատիք նրան չորացնել չարդարիք տակ, վորտեղ համին պատ խաղա նրա շուրջը։

5. Կրուած ուռկանը պահպանիր տակ ողից և արևի նառագայր ներից։

6. Զորացնելու համար կախված ուռկանն ավելի հաճախ շուր տուր, վոր նրա մեջ խօսել տեղ չմնա:

7. Յերե կախարան են պատրաստում, ապա այնախի բարձրությունը ընտրիք, վոր նրա տակից բամբին խաղա:

8. Այնախի որերին, յերբ բամբ չկա, ուռկանը խոսի կամ հողի վրա չորացնելուց խուսափիք, բամբ վոր նրանցից ել չուր ե գոլորշիանում:

9. Զորացք ուռկանը մի ճգիր խոմալ տեղ:

10. Նավախորշը, վորտեղ դու պահում են ուռկանները, յերե արևից խիստ տարբանում ե, բաց արա, վոր ողափոխվի և հովանա:

11. Զրում յեղած ուռկանն ուրիշ տեղ փոխադրելիս լավ լվացիք և ազատիք աղքից:

12. Ուռկան ճգելու տեղն ազատիք հանկիչներից և նեխած բերածուներից:

13. Հետուիք, վոր նավի վրա չկան հանկիչներ և շրջեգրք լինի վողորի:

14. Բարեխիղն վերաբերվիք ուռկաննին: Մաքրելու և հավաքելու ժամանակ, մի պատառութիք, մի կարտիք ցանցը, յերբ ճուկը դուրս ե պրենում նրանից:

15. Ժամանակին յերկրորդ անգամ կոնսերվացրու:

16. Կոնսերվացման ժամանակ հետուիք, վոր ուռկանը պահանջված ժամանակում պահի և չիշանա:

17. Աշխատանքի ժամից դուրս ուռկանը պահիք միայն լավ չորացած դրույթամբ:

18. Պարապ ժամանակ ուռկաններ պահելու տեղը պիտի լինի բավականաչափ չոր և ամերկների ու ճյուղի համար անմատչելի: Չոր, բայի կամաչափ չոր և ամերկների ու ճյուղի համար արանակ, վոր կարողանաս գիվել բարմ ողի և հուլ:

19. Ցախատներում և ուռկանները պահելու այլ տեղերում, չոր ու հուլ ժամանակ, շուր տուր կույտերակ դրած ցանցերը: Այդ կողմի ժեզ գոլորշիացնել ավելորդ խոնավությունը և պարզել, թե չե՞ն փառում արդյուն ցանցերի այդ կույտերը: Կույտի ներսից յեկող քրտնակոտ և բարդ զերմատինանը ցույց են տալիս, վոր ուռկաններն արդին սկսել են ճըր պահանակները պահիք արանակ, վոր պահելու ամբողջ կույտը:

20. Այս ցախատունը կամ ամբարում, վորտեղ պահվում են ձկնորսական գործիքները, բույլ մի տուր, վոր ապրեն ընտանի բռչուններ սական լինականի կենդանիներ: Նման դեպքերում ողակավարը կամ բրիգադիրը պետք է անմիջապես ուռկանների համար հատուկ տեղ հատկացնեն, կամ դուրս հանեն այդ կենդանիներին:

21. Ուռկանով ձմեռն աշխատելու ժամանակ, զգուշուրյամբ և ուշորությամբ վարվիք ուռկանի սառած բեկերի հետ, բույլ չտալով, վոր նրանք չարդիքնեն:

Յուրաքանչյուր բրիգադիր, յուրաքանչյուր ողակավար, մեր տիգած խորհուրդների և իր ուսումնաօբրությունների հիման վրա պետք ե մշտական գիր ուռկանների պահելու և խնամքի կանոնները: Սակայն բարձական չի պահելու համար կամ նրանք իրավունք ե գործիքները պահանջում իրավունք ու պահանջում իրավունք այդ կանոնները:

Պարբծվեն: Անհերաժեշտ և հետեւել և սոուզել ողակների աշխատանքները, ավելի հաճախ նայել ձկնորսական գործիքներին, ձգտելով, վոր նրանք ամբացրած լինելով ողակներին, ուռկանների պարապ ժամանակ պահանջներում:

ՊԱՅՔԱՐԻԲ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մենատնաւուի դժբախտությունը նրա հատամնացությունն է: Վերցնենք թեկուղ չքավոր մենատնաւուին: Նա գտնվում էր շարունակ վաշխառույթի և կուլակի ճանկերում ու նրանց ազդեցության տակ: Զարչին, խանությանը, կուլակը ճնշում էյին չքավորին, թույլ չեյին տալիս, վոր նա զարգացնի իր տնտեսությունը և լավացնի ձկնորսական գործիքների պահելու գործը: Չքավոր մենատնաւուի ուռկաններն ակամամայից վիշտում էյին: այդ պարագաները չքավորի մոտ պահվում էյին ամենավատ պայմաններում: Պարապ ժամանակ ուռկանները մի քիչ լավ էյին պահվում միջակ տնտեսություններում, սակայն նրանց մոտ ել ուռկաններն անխտիք ընկած էյին լինում խոնավ վանդակիների վրա ցախատներում, ներքնատներում և հաճախ տանիքի տակ:

Կոլեկտիվ տնտեսության մեջ բոլոր հնարավորությունները կան ամսիշանգես հրաժարվելու գործիքների նման պահպանությունից: Ներկարում կոլտնտեսություններում ուսկաններն ամրացված են բրիգադներին, սղակներին: Այս շատ լավ միջոց է, քանի վոր սրանով հնարավոր ե վերջ տալ դիմագրիքությանը: Սակայն այս դեռ բոլորը չեն: Զնայած ուռկաններն ամրացված են բրիգադին, բայց միջանի դեպքում այդ պարագաները ցրված և լինում «գյուղով մեկ» ողակների, մինչեւ անդամ կոլտնտեսության առանձին տնտեսությունների միջև: Այդ գրությունից յնինուով, վորեն կոմիսիա չի կարողանում նայել, սոուզել ուռկանները, վորոշել նրանց քանակը, դրությունը և վերջաղիս պահելու կարգը: Հաճախ ուռկանները պահվում են ելի նույն չարդախներում, ցախատներում, նույն խոնավ վանդակների վրա: Այդ խոնավ պահմաններում ուռկաններն ակտում են միշանալ: Նշանակում ե՝ կոլտնտեսություններում անհրաժեշտ և կառուցել այնպիսի պահեստներ, վորոնք հնարավորություն տան ձկնորսական գործիքների պահպանությունը լավ կարգակերպելու:

Նման պահեստների կառուցմանը պետք է մոռենալ տնտեսական տեսակետից և նախարոք մոռծածված կերպով: Բանն այն է, վոր վորքը պահեստների կառուցումը կիսնի անոնտեսավարակում և թանգ: Մեծ պահեստներ կառուցելով, այնուղի պիտի տիրի դիմագրիքություն (ինչպես մտածում են շատերը), քանի վոր տարրեր բրիգադների և ողակների ուռկանները խառնվում են իրար և այդպիսով գործիքները բրիգադներին ամրացված չեն լինի: Այս գրությունից դուրս գալիք այնքան ել դժվար չեն: Յըրմած, մանր պահեստները հարկավոր չեն: Պետք է կառուցել մեծ պահեստներ, բայց նրանք պետք է կառուցվին այնպես, վոր յուրաքանչյուր բրիգադը ունենալ իր բաժանմունքը, իսկ բրիգադային բաժանմունքների աշխատանքը ամամար է ամսական համար: Դրա համար մենք խորհուրդ ենք տալիս:

յուրաքանչյուր կախարանի դիմաց պատի վրա զբսից պատրաստել փակ-
փող լուսամուտներ : Յուրաքանչյուր պատուհան կարող է ունենալ 15
սմ . լայնություն , իսկ լեռկարությունը կախած է կախարանի լայնու-
թյունից , մոտավորապես 50—70 սմ . , պատուհանները պետք է շինել
չառակից 1 մետր բարձրությամբ : Պահևատի պատերը պետք է լինեն
ամուր և խոնավության (անձրի , ձյուն) համար անթափանցելի : Կտորը
նմանապես պետք է լինի դիմացկուն և ունենա ջրատար հարմարու-
թյուններ :

Կորին պետք է շինել փայտայ ծխնելուցիներ , վորոնք իրենց կողերին
և ծայրի մասում ունենան փակելու հարմարություններ : Ներսի ողբ
ծնող այլ խողովաճերը պահևատի կորին պետք է գատավորել այն հաշ-
դով , վոր ամեն մի բրիդագային բաժանմունքի ընկնի առանձին խողո-
վակ : Խողովաճերի չափերն ու քանակը պետք է վորոշել բրիդագային
բաժանմունքի մեծությունների և պատուհանների քանակի համեմատ :
Համենայն դեպք պետք է ձգտել , վոր բաժանմունքի մի կողմի պատու-
հաններից ներս մտած ողն անհապաղ դուրս զա դիմացի պատռհաննե-
րից և վերահշյալ խողովաճելից :

Խողովաճի բոլոր կողերի պատուհանները չպետք է բացել , այլ
միայն այն պատռհաննը , վորը գտնվում է քամու ուղղությամբ : Ողա-
փոխության այսպիսի ձեռ տյն նպատակն է հնատավնդում , վոր չոր յե-
ղանակներին պահևատում կատարվի լավ և արագ ողափոխություն .
իսկ խոնավ , մատախուսատ որերին այլ ողափոխությունը հնարավոր
լինի բնդ հատել : Այդ պատճառով ել խոնավ յեղանակներին չպետք է
բաց անել վոչ բաժանմունքային ողափոխության պատուհանները և վոչ
ել խողովաճի անցքերը : Սակայն չոր քամու և ձմեռային սանամանիքի
ժամանակ պետք է բացել ողափոխության պատուհաններն ու խողովաճ-
իների համապատասխան անցքերը : Զյան և փոթորկի ժամանակ պահևատի
բոլոր ողափոխության այլ անցքերը նմանապես պետք է փակել :

Պահևատը պետք է շինել լավ հողմահար տեղում : Վատ չի լինի ,
յեթե պահևատն աղբատ լինի արեի կիզիչ ձառաղայթներից ծառերի մի-
ջոցով , իսկ կոտըրն ու ամրող պահևատը սպիտակացիք (կամ սպիտակ
ներկի) : Սպիտակ դույն արտացոլում և արեի ձառաղայթներն , ու
պահևատն աղբատում անսեղի տաքանուուց :

Պահևատը պետք է կառուցել ափերի մատ և կոլտնանսության ար-
ևսուանացնելից ու այն շնչերից վոչ հեռու , վորունդ կատարվում է
ձկնորսական գործիքների նորոգումը : Ի հարկե լավ կլինի , յեթե կոր-
տուանսությունը կարողանա կառուցել յուրահատուկ կօրոնանսային
նույնանուպիսան՝ պահևատներով և վերանորոգման արհեստանոցներով ,
նույների համար մերձենալու ճանապարհներով և նրանց հանգստի հար-
ժարություններով : Սա մատ ապագայի զործ և և արդեն առորյա խնդիր
և դորձել : Այդ խնդիրն խօսալու մեջ և դժվար խնդիր է : Այդ բնդը
յուծովմք կհանդիպի անշուշտ կորոնանսության մեջ գոնվող կուլակային
սպիտակ բացի պիմադրության : Հարկավոր և այս խնդիրը լավ ուսում-
նասիրի և նրա իրականացմանը մոտենալ լինորեն :

Ելազգս , ուրեմն , ամեն մի կորոնանսություն , ամեն մի կորոնան-
սական , պետք է ձգտեն կոռուցել կորոնանսային պահևատներ : Նման պա-
հևատը կլինի կոլտնանսային նախանզուտի տուաջին հիմնաքարը :

Մեզ մոտ սակայն , կորոնանսային պահևատներ գեռես չկա , բայց
այլ յերբեք չի նշանակում , թե պետք է սպասել նրանց կառուցմանը և
ուռկանները թողնել , վոր փշանան խոնավ վանդակների վրա , ցախա-
տներում և այլն : Բանի վոր գեռես չկան բարեկարգ պահևատներ , պետք
է ամեն կերպ աշխատել լավացնել ձկնորսական գործիքները պահելու
պայմանները գոյություն ունեցող ցախաններում , և այլն : Պետք և
հետեւ , վոր այլ տեղերը խոնավ չաճախ ողափոխության
յենթարկվեն : Դրա համար բրիգադիրը պետք է շրջի ողակները տեսնե-
լու , թե ինչպես են պահում ուռկանները : Վատ պայմաններ հայտարե-
րելիս , բրիգադիրն անմիջապես պիտի միջոցներ ձեռք առնի ուռկաննե-
րը բարեհաջող պայմանների մեջ զնելու համար :

ՄՏԱԾԻՐ ՅԵՎ ԻՆՔԻ ՓՈՐՉԱՌՈՒԹՅՈՒՆ ԶԵՌԻՑ ԲԵՐ

Ընկեր կոլտնանսական և բանվոր , այն հարցեիր , վոր մենք շոշափե-
ցինք այս զրուցում , ունեն շատ մութ և չուսումնասիրված տեղեր :
Այդ բացատրվում է նրանով , վոր ձկնային գիտությունը նոր գիտու-
թյուն է : Նա զեռ չի կարողացել կուտակել բավականաչափ հարուստ
փորձ , բավականաչափ ուսումնասիրություններ , վոր կարողանա միան-
գամից լրիվ կերպով քեզ ոզնել , պայքարելու ուռկանի գիմացկունու-
թյան և ընդհանրապես ձկնորսական գործիքների մաշվածքի ժամկետը
յերկարացնելու համար : Այդ պատճառով մենք կարողացանք քեզ տալ
միայն միքանի առավել կարեոր ցուցմունքներ այդ պայքարը հաջողու-
թյամբ մղելու համար :

Մենք ցանկանում ելինք ոզնել քեզ իմանալու ուռկանների փշանակու-
ղաղոնիքը : Ինչպես զու տեսար , այդ զաղտնիքն իր իսկ մաղմղուկի
մեջ է թագնված , նրանում , թե նա վորքան գիմացկուն և խնավության ,
ողի (թթվածնի) , ջերմության աղղեցության տակ : Փչացման գաղանիքը
պարունակվում է նաև փոնցման մեջ , վորն առաջ է գալիս նեխիչ բակ-
տերիաններից : Դու այժմ զիտես , վոր մազմզուկը , վորից պատրաստ-
ված է ցանցային թելը , շարունակ փոփոխվում , քայլայվում է , կորց-
նում է իր ամրությունը :

Մենք քեզ կոչ ենք անում կանոնավոր , տնտեսավարական խնամքով
և հոգաստարությամբ վերաբերյալ ուռկանների հետ , վորքան կարելի յե-
րկարացնես նրա զիմացկունության ժամկետը :

ՊԱՅՔԱՐԻՌ ՈՒՐԿԱՆՆԵՐԻ ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՅԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այս պայքարը—մեր միացյալ դործն է : Այս պայքարի համար մի
քանի ցուցումներ արգեն տվել ենք քեզ , բայց և մենք քեզանից ոզնու-
թյուն ենք սպասում :

Մենք ասացինք քեզ , վոր ձկնային գիտությունը յերիտասարդ և և
զեռիս բավականաչափ փորձ չունի : Դու զիտես , վոր առաջ փորձի ,
զիտությունն անզոր է :

Փորձով հարուստ և պրակտիկան : Ահա թե ինչու գիտությունն
այսպես խիստ զգում է քո ոզնության կարիքի :

Վորքան կարելի յե ուշագրությամբ հետեւ ուռկանին , հետեւ

և հոկիր նրա հետկառաքվիլ յերկույթներին, աշխատիր ինքդ հասկա-
նալ նրա փշացման պատճառները:


Բոլոր քո դիտողությունների մասին Հաղորդիր մեզ: Յեթե վորեն
անհավանալի բան կհանդիպի, գրիր և մեղանից հարցրու:

Գրիր, ինչպես կարող ես: Աշխատիր միայն վորքան կարելի յե մտն-
րաման նկարագրել տեսածդ: Հաղորդիր բոլոր քո նախատեսություն-
ներն ու յենթաղբությունները տիյալ յերկույթի մասին:

Վորքան շատ գրես մեզ, այնքան ավելի շատ փորձ կհավաքենք
մենք և հաջող կերպով կլուծենք մեր ընդհանուր խնդիրը՝ ստիպել ուռ-
կանին, վորքան կարելի յե յերկար ծառայելու:

Մեզ նամակ գրելիս գրեցեք հետեւյալ հասցեյով՝

Москва, 8, Петровское-Разумовское, МОСРЫБВТУЗ,
кафедре техники ^{ՀԱՅՈՒՅՐԻ} промысла.



Թարգմ. Ս. ԱՂԱՎԵԼՅԱՆ Լեզվի խմբ. ԶԱՔԱՐՅԱՆ Սրբագրիչ՝ Թ. ՍԱՐՈՅԱՆ

ՊԵՏՐՈՎԻ ՏՄԱՐՄԱՆ

Հքատարակ՝ 2200 Դիմում 7478 (բ) Պատվեր 1459 Տիրած 1500

Հանձնված ե արտադրություն ապրիլ 23-ին, 1932 թ.

Ստորագրված ե ապելու մայիսի 16 ին 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0298112

ԳՐԱԼ 25 հզ. (1¹/₄ մ.)



Н. Я. БРИНЦЕВ

БЕРЕГИ ОРУДИЯ ЛОВА

Գումարատ ССР Армении
Эривань—1932

23,256